



# Կ Ա Ն Ա Ն Ց ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Համալսարանական կրթությամբ կանայք» լրատուի հավելվածը տպագրվում է «Կանանց շարժումը հազարամյակի խաչմերուկներում. նոր մարտահրավերներ և ռազմավարություններ» ծրագրի շրջանակներում:

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ - 2009, №4

Հարգելի՛ ընթերցող, կանանց դրության վերաբերյալ Պեկինի համաշխարհային խորհրդածո-  
ղովից հետո անցած 15 տարիները կանանց հասարակական կազմակերպությունների նոր նվաճումների  
և նոր դժվարությունների ժամանակաշրջան էին: Կանանց ՀԿ-ները անցան արգելքներ հաղթահարելու  
ճանապարհով, որոնցից աշխատանքի նոր ձևեր և տեխնոլոգիաներ Պեկինյան գործողությունների  
ծրագրում սահմանված ռազմավարությունների իրականացման ուղղությամբ: Հավասար ներկայաց-  
վածության և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում հավասար մասնակցության  
իրավունքների լիարժեք իրականացումը, կանանց հնարավորությունների ընդլայնումը բարդ գործ-  
ընթաց էին: Ասոցիացիան և նրա մասնաճյուղերը՝ որպես փոխլրացնող կառույցներ, շարունակում էին  
աշխատանքի արդյունավետ ձևերի որոնումները: Այդ կառույցներից մեկի՝ Ասոցիացիայի Սևանի մաս-  
նաճյուղի գործունեությունն է ներկայացված սույն համարում:

Ասոցիացիան երախտագիտություն է հայտնում մասնաճյուղի փոխնախագահ Արմինե Ղուկասյա-  
նին համարի նյութերը պատրաստելու համար:

## Կանանց ներուժը պետք է ուղղորդել



**Օ**րեցօր ա-  
ռ ա վ ե լ  
ակնհայտ է դառ-  
նում, որ առանց  
կանանց հասա-  
րակական ակտի-  
վության անհնար  
է քաղաքացիա-  
կան հասարա-  
կության ձևավո-  
րումը: Արդեն 3  
տարի Սևան քա-  
ղաքում գործում է

ասարակության մեջ գեներային հավասարակշռու-  
թյան ապահովմանը:

Չափազանց կարևորելով հասարակական  
գիտելիքների հարուստ պաշարով զինված լինե-  
լու, օրենսդրական, իրավական, քաղաքական  
կյանքի նորույթներին տեղյակ լինելու անհրա-  
ժեշտությունը՝ մասնաճյուղը կազմակերպել է  
սեմինարներ, կլոր սեղաններ, որոնց մասնակցել  
են հանրապետության կանանց հիմնահարցերի  
ուսումնասիրությամբ զբաղվող փորձագետներ:

Կյանքը ցույց է տալիս, որ բարձրացված  
հարցերի լուծումը հնարավոր է, եթե ապահով-  
վում է շահագրգիռ կազմակերպությունների  
միասնական գործունեություն: Այս իմաստով  
մենք կարևորում ենք համագործակցությունը  
տեղական ինքնակառավարման մարմինների  
հետ, և գոհունակությամբ պիտի նշեմ, որ մշտա-  
պես զգում ենք Սևանի համայնքի ղեկավար  
Գևորգ Մալխասյանի աջակցությունը:

Սևանում ավարտվել են կանանց լի-  
դերության դպրոցի պարապմունքները: Առաջին  
հոսքի պարապմունքներն անցկացվեցին հա-

Համալսարանական կրթությամբ կանանց ասո-  
ցիացիայի մասնաճյուղը՝ փորձելով իր  
ներդրումն ունենալ հայաստանյան սոցիալ-  
տնտեսական, հասարակական-քաղաքական  
կյանքի բարեփոխումների գործընթացներում:  
Սևանի մասնաճյուղի կանայք տարբեր բնագա-  
վառների աշխատողներ են և ներկայացնում են  
այն հիմնական օղակները, որոնք նպաստում են  
կնոջ հասարակական դերի բարձրացմանը, հա-



մայնքի ղեկավար Գևորգ Մալխասյանի հովանավորությամբ, և մասնակցեցին տարբեր բնա-

լավ և վատ տեխնոլոգիաների նրբությունների մեջ՝ կարծում են՝ ճիշտ կլինի գենդերային քվո-



տաների ներդրումը ավագանիների ընտրության ժամանակ: Գուցե հարկ է նաև կանանց, երեխաներին, ընտանիքին վերաբերող հարցերին գործնական լուծում տալու նպատակով առանձին բաժին ստեղծել քաղաքապետի աշխատակազմում:

Կինը, նաև հայ կինը միշտ եղել է հասարակության առաջնորդիչ ուժ, և պետք է մտածել ոչ միայն կառավարման ու այլ ոլորտներում արժանի դեր ստանձնելու հնարավորությունների, այլև ընդհանրապես կա-

զավառներ և հասարակական կազմակերպություններ ներկայացնող կանայք: Լիդերության դպրոցի 2-րդ հոսքի պարապմունքներն անցկացվեցին Ասոցիացիայի տրամադրած դրամաշնորհի շրջանակներում: Համադասողները՝ Արփինե Մանուկյանը և Գոհար Մնացականյանը, կարողացան լավագույն ձևով կազմակերպել 8-օրյա պարապմունքները:

մանց, ընտանիքի կենսապայմանների բարելավման մասին: Իսկ դրանց միտված որոշումների ընդունումը թերևս չի կարելի առանց կնոջ մասնակցության:



Դրանք օգտակար և արդյունավետ էին, որովհետև գիտելիքը ուժ է, և առավել վստահ է զգում իրեն այն անձը, ով ունի հարուստ և համակողմանի գիտելիքներ:

Կանանց ակտիվացման գործում քազում անելիքներ կան մեր քաղաքում: Ուրախալի է, որ քաղաքի սոցիալ-տնտեսական, առողջապահության, կրթության և այլ ոլորտներում կանայք լուրջ ներդրում ունեն, սակայն մտահոգող է, որ որոշումների կայացման մակարդակում, ինչպես ամբողջ հանրապետությունում, նրանք ընդգրկված չեն:

Հուսով եմ, որ մեր լիդերության դպրոցի երիտասարդ ուկնդիրների ներուժը, որ զգացվեց պարապմունքների ընթացքում, կօգտագործվի իշահ մեր քաղաքի զարգացման և ի նպաստ կնոջ դերի բարձրացման:

**Անահիտ Ավետիսյան**

*Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի նախագահ*



## Գևորգ Մալխասյան. «Ես ողջունում եմ կանանց նախաձեռնությունները»

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի վերաբացումն էլ 2006 թ. մեր համայնքի կանանց գործունեության և համախմբման լուրջ քայլ էր: Մասնաճյուղի նախագահ Անահիտ Ավետիսյանն իր մասնագիտական և մարդկային որակների, քաղաքացիական ակտիվության շնորհիվ կարողացավ կարճ ժամանակահատվածում համախմբել ակտիվ և բանիմաց կանանց:

Կանանց լիդերության դպրոցն էլ մասնաճյուղի հերթական ձեռնարկումն էր, որի կայացման գործում ես իմ լուծման ներդրեցի: Կարծում եմ՝ մեզ շատ անհրաժեշտ են իրավական, քաղաքական, տնտեսական գիտելիքներով զինված կանայք:

**- Շրջանառվում է այն միտքը, որ «հայ կանայք չեն սիրում քաղաքականության ոլորտ մտնել, քանի որ իրենց կոչումն ու հիմնական դերը տեսնում են ընտանիքում»: Դուք համամի՞տ եք:**

- Շատ դեպքերում հայ տղամարդու մեջ կանանց իրավունքների նպատակային ասանակափակումն է խոսում: Անշուշտ, կնոջ հիմնական առաքելությունն է առողջ սերունդ ունենալն ու դաստիարակելը: Սա նաև ազգային մտածողության արդյունք է, որը կամաց-կամաց տեղի է տալիս: Կանայք «ստիպում» են, որ տղամարդիկ լինեն առավել շրջահայաց, քաղաքականությունը չդարձնեն մենաշնորհ: Շատ դեպքերում էլ խելացի, կազմակերպված կանայք իրենք են ստեղծում պայմաններ տղամարդկանց առաջընթացի համար:

**Ամեն դեպքում ժամանակը առաջ է գնում, պայքարի նոր ճանապարհներ են բացվում, և կանայք քաղաքականության մեջ փորձում են ունենալ իրենց խոսքն ու դերը:**

Հարցազրույցը վարեց  
Արմինե Ղուկասյանը

**Ռ**եռն 2008 թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախօրեին Սևանի համայնքի ղեկավար, համայնքի ղեկավարի թեկնածու Գևորգ Մալխասյանը, խոսելով ընտրություններում կանանց առաջադրման մասին, նշում էր. «Ես կողմնակից եմ և ողջունում եմ կանանց նախաձեռնությունները, այդ թվում նաև ընտրություններում նրանց թեկնածության առաջադրումը: Կարծում եմ, որ կանանց պատրաստակամությունը, խորափանցությունը, հարցերի նկատմամբ բազմակողմանի մոտեցումը օգնելու են տղամարդկանց»:

2008 թ. ՏԻՄ ընտրություններում Սևանի համայնքից որպես ավագանու թեկնածու առաջադրվեց մեկ կին և չընտրվեց:

Ընտրություններից մեկ տարի անց գրույցի ենք հրավիրել Սևանի համայնքի ղեկավար Գևորգ Մալխասյանին:

**- Պարո՛ն Մալխասյան, Սեանում քիչ չեն ակտիվ, խելացի և պայքարասեր կանայք, որոնք ունակ են լուծելու համայնքային բազմաբնույթ խնդիրներ, մասնակցել և մասնակցում են մի շարք ծրագրերի կենսագործմանը:**

- Այո, լիովին համամիտ եմ: Սևանը միշտ էլ աչքի է ընկել մեծ ներուժ ունեցող կանանցով, որոնք իրենց խոսքն են ասել տարբեր բնագավառներում: Անցումային շրջանում էլ կանայք իրենց ուսերին տարան սոցիալ-տնտեսական բոլոր դժվարությունները և պատվով դուրս եկան: Ես միշտ էլ ողջունել եմ ակտիվ դիրքորոշումը, հասարակական կյանքին մասնակից լինելը:



## Կանայք նախաձեռնությունների ճանապարհին



Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի «Կանայք հասարակության մեջ. ժողովրդավարություն և առաջընթաց» հանրապետական ակցիայի շրջանակներում 2007 թ. հոկտեմբերին Սևանում կազմակերպվեց կլոր սեղան, որի աշխատանքներին մասնակցում էին մասնաճյուղի անդամները, քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների, կրթամշակութային օջախների ներկայացուցիչներ, քաղաքապետարանի պատասխանատուներ: Կլոր սեղանի պատվավոր հյուրն էր քաղաքապետ Գևորգ Մալխասյանը: Սևանի մասնաճյուղի նախագահ Անահիտ Ավետիսյանը մասնակիցներին ներկայացրեց հանդիպման նպատակը և այն հիմնախնդիրները, որոնք ակցիայի կազմակերպման շարժառիթն են: «Հանուն երկրի զարգացման՝ կանայք և տղամարդիկ պիտի հավասարապես կրեն պատասխանատվության բեռը: Մենք տեսնում ենք, որ յուրաքանչյուր իրավիճակում մեծ կարևորություն ունի ոչ միայն կնոջ ներկայությունը, այլև խոսքը, որոշումներ կայացնելու համարձակությունը: Միշտ էլ խոսելը հեշտ է, բայց էականը գործունեություն ծավալելն է և դրա միջոցով առաջընթաց, ձեռքբերում գրանցելը: Չունենանք, որ բնակչության 50%-ից ավելին կանայք են, և նրանց խոսքը պիտի որոշիչ լինի նաև որոշումների կայացման մակարդակում: Այսօրվա կլոր սեղանը մի պատեհ առիթ է քննարկելու համայնքային հիմնախնդիրները և կանանց համախմբվածության միջոցով մատնանշելու լուծման տարբերակները: Ուրախ ենք, որ մեր հրավերը չի մերժել քաղաքապետ Գևորգ Մալխասյանը, նա համայնքի հիմնախնդիրների լուծման իր տարբերակն ունի և այստեղ կարող է շահագրգիռ երկխոսություն ծավալել»:

Քաղաքապետը կանանց հրավիրեց ակտիվ երկխոսության՝ մասնավորեցնելով այն բնագավառներն ու ուղղությունները, որոնց վրա պիտի բեռնվի ուշադրությունը. «Քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին կարևորվում է յուրաքանչյուրիս ակտիվ դիրքորոշումը և մասնակցությունը մեր երկրի, քաղաքի զարգացման գործին: Այդ ճանապարհին քիչ չեն հիմնախնդիրները, որոնց լուծումը պայմանավորված է նաև մեզնով: Փորձենք քվարկել մեր համայնքին բնորոշ մի քանի խնդիրներ: Քաղաքի մաքրության խնդիրը, չնայած իրականացվող ամենօրյա աշխատանքներին, օրակարգային հարց է և պահանջում է նորովի մոտեցում: Հեշտ է դժգոհելը, թերություններ վեր հանելը, սակայն դրանով և՛ մեզ, և՛ քաղաքին ոչինչ չենք տալիս: Այսօր ավելի է կարևորվում է կոլոգիական դաստիարակության խնդիրը, որը պիտի ծառայի իր նպատակին ոչ թե սեմինարից սեմինար, այլ դառնա կենսաձև: Մեծ բաց է երիտասարդության ազատ ժամանցի կազմակերպումը, որտեղ ասելիք ունեն և՛ տեղական իշխանությունները, և՛ ՀԿ-ները: Բավականին սրված է սոցիալական իրավիճակը, և մեղմացման փորձերակներից մեկն էլ աշխատատեղերի ստեղծումն է, որը ներկա պայմաններում փոքր և միջին ձեռնարկարիտության հետ է շողկալվում: Այսօր քաղաքում գործում է նմանափայ կենտրոն, և կանայք կարող են իրենց ձեռնարկարիտական գաղափարները դարձնել կոնկրետ աշխատանք»:

Հնչեցին բազմաթիվ կարծիքներ, ցանկություններ, որոնց հիմքում կանանց խմբերի և անհատների նախաձեռնություններն էին: Հարցերի շրջանակը բավականին ընդգրկում էր՝ գենդերային հարցերի վերահանումից մինչև մշակութային բազմաբնույթ խնդիրներ:

Ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի նախագահ Անահիտ Ավետիսյանը հանդես եկավ առաջարկությամբ. «Քաղաքապետի նախաձեռնությամբ 2002 թվականից գործում է «Սևան» բարեգործական հիմնադրամը: Այն մի շատ կարևոր առաքելություն ունի՝ սևանցիների միջոցով Սևանի համար կարևորագույն խնդիրների լուծում: Առաջարկում են ամեն ամիս մեր ներդրումը ունենալ հիմնադրամում, ապա մշակել համայնքային որևէ խնդիր լուծման ծրագիր և հիմնադրամի միջոցով իրականացնել այն»:

Միայն միասնական ջանքերի շնորհիվ կարող են ծնվել նախաձեռնություններ. սա նաև նախաձեռնող խմբի կարծիքն էր: Կլոր սեղանի մասնակիցները եկան այն համոզման, որ միայն սոցիալական գործընկերության շնորհիվ է հնարավոր լուծել այն խնդիրները, որոնք այսօր ունեն համայնքային նշանակություն: Յուրաքանչյուր, թեկուզ և փոքր, հաջողված ծրագիր հետագա մեծ գործերի սկիզբն է:

Քաղաքապետը կանանց հրավիրեց ակտիվ երկխոսության՝ մասնավորեցնելով այն բնագավառներն ու ուղղությունները, որոնց վրա պիտի բեռնվի ուշադրությունը. «Քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին կարևորվում է յուրաքանչյուրիս ակտիվ դիրքորոշումը և մասնակցությունը մեր երկրի, քաղաքի զարգացման գործին: Այդ ճանապարհին քիչ չեն հիմնախնդիրները, որոնց լուծումը պայմանավորված է նաև մեզնով: Փորձենք քվարկել մեր համայնքին բնորոշ մի քանի խնդիրներ: Քաղաքի մաքրության խնդիրը, չնայած իրականացվող ամենօրյա աշխատանքներին, օրակարգային հարց է և պահանջում է նորովի մոտեցում: Հեշտ է դժգոհելը, թերություններ վեր հանելը, սակայն դրանով և՛ մեզ, և՛ քաղաքին ոչինչ չենք տալիս: Այսօր ավելի է կարևորվում է կոլոգիական դաստիարակության խնդիրը, որը պիտի ծառայի իր նպատակին ոչ թե սեմինարից սեմինար, այլ դառնա կենսաձև: Մեծ բաց է երիտասարդության ազատ ժամանցի կազմակերպումը, որտեղ ասելիք ունեն և՛ տեղական իշխանությունները, և՛ ՀԿ-ները: Բավականին սրված է սոցիալական իրավիճակը, և մեղմացման փորձերակներից մեկն էլ աշխատատեղերի ստեղծումն է, որը ներկա պայմաններում փոքր և միջին ձեռնարկարիտության հետ է շողկալվում: Այսօր քաղաքում գործում է նմանափայ կենտրոն, և կանայք կարող են իրենց ձեռնարկարիտական գաղափարները դարձնել կոնկրետ աշխատանք»:

**Արմինե Ղուկասյան**  
Սևանի քաղաքապետարանի  
լրատվական ծառայության ղեկավար,  
Համալսարանական կրթությամբ  
կանանց ասոցիացիայի  
Սևանի մասնաճյուղի փոխնախագահ



## Ոչ միայն ներսի պատ...

Մեր արմատները խորն են, պատմությունը՝ հարուստ, և ազգի ժառանգականությունը պահպանելու համար այսօր, ավելի քան երբևէ, մեր հասարակությանը անհրաժեշտ են ազատ մտածողությամբ, խելացի և զարգացած կանայք:

Անահիտ Ավետիսյանը մասնագիտությամբ մանկավարժ է, երկար տարիներ զբաղեցրել է ղեկավար պաշտոններ, հասարակական-քաղաքական կյանքում միշտ եղել է առաջամարտիկ: Այսօր էլ մանկավարժությունը համատեղում է հասարակական գործունեության հետ. Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի վարչության անդամ է, Ասոցիացիայի Սեանի մասնաճյուղի նախագահը:

**- Տիկին Ավետիսյան, Ձեր երկարամյա աշխատանքային փորձը փարբեր բնագավառներում ոչ միայն աշխատանքային հարուստ կենսագրություն է, այլև աշխարհայացք և մտածողություն: Ըստ Ձեզ՝ ո՞րն է կնոջ դերը հասարակության մեջ:**

- Հնուց եկող ավանդույթով հայ կինը համարվում է ընտանեկան օջախի պահպան: Բայց հայ կինը երկրի դժվար պահերին եղել է տղամարդուն աջակից և արել ամեն ինչ՝ հաղթահարելով և՛ ընտանիքի, և՛ աշխատանքի, և՛ հասարակական կյանքի դժվարությունները: Ուստի ճիշտ չի լինի կնոջը հասարակական բազմաբարդ խնդիրներից մեկուսացած տեսնելը: Իսկ դա ես պատկերացնում եմ միայն բնականոն զարգացման մեջ: Ծայրահեղությունները չեն ընդունում. ո՛չ կնոջը սեռային պատկանելության համար առաջնություն պետք է տրվի, ո՛չ էլ նույն պատճառով քաղաքականությունից հեռացնելու անջրպետներ պետք է ստեղծվեն: Կինը կարող է և պետք է տղամարդուն հավասար լինի երկրի համար կարևորագույն որոշումների ընդունման գործընթացում: Ցավոք, այսօր այդպես չէ: Ապացույցը մեր խորհրդարանում կանանց չափազանց փոքր թիվն է, կառավարման ոլորտում հատուկեմտ կին ղեկավարների առկայությունը: Կանայք չկան նաև տեղական կառավարման մարմիններում՝ ավագանիների կազմում:

**- Գուցե ա՞յդ էր դրդապատճառը, որ Գուրդարչաք Սեանում Ասոցիացիայի մասնաճյուղի վերաբացման նախաձեռնողը:**

- Թերևս: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի առաքելությունը Հայաստանում ժողովրդավարական, քաղաքացիական հասարակության կայացմանը նպաստելն է, կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովման, հասարակության մեջ կանանց

կարգավիճակի ամրապնդման խնդիրների լուծումը: Մեր քաղաքում համալսարանական կրթությամբ կանայք մեծ ներուժ են, և նրանց մասնագիտական կարողություններն ու հասարակական ակտիվությունը նպատակային օգտագործելու դեպքում մեր հասարակությունն ամպայման կշահի: Ընդհանրապես ՀԿ-ները դիտորդական կարգավիճակից պետք է ձեռքազատվեն և առավել ակտիվացնեն քաղաքացիական նախաձեռնությունները, ինչը կհանգեցնի ժողովրդավարական գործընթացների խորացման և քաղաքացիական հասարակության կայացման:

**- Շատ փղամարդիկ խելացի կնոջ ներկայությունից անհարմարություն են զգում, նույնիսկ չեն հանդուրժում նրանց: Կուզենայի՞ք, որ Հասարակական նախագահը կին լիներ, թե՞, այնուամենայնիվ, դա փղամարդկանց մենաշնորհն է:**

- Տղամարդիկ խելացի կնոջ ներկայությունից անհարմարություն երևի զգում են, բայց եթե չեն էլ խոստովանում, ներքուստ գնահատում են նրանց: Ի վերջո, ու՞մ է հաճելի սահմանափակ, նեղմիտ, ցածր մտավոր կարողություններով օժտված անձնավորությունը, լինի կին, թե տղամարդ: Այլ հարց է, որ երբեմն վախենում են ուժեղ կանանցից, հաճախ էլ փորձում մրոտել... Իսկ նախագահի թեկնածության համար իմ պատկերացումներից համապատասխան կին քաղաքական ու պետական գործիչ չեն տեսնում այսօր: Բայց ավելացնեմ, որ ոչ մի քաղաքական, պետական (և ընդհանրապես բոլոր բնագավառներում) պաշտոն երբեք չի կարող տղամարդու մենաշնորհը լինել: Եկեք հիշենք մեր վիպերգը. «Առյուծը առյուծ է, էղնի էգ, թե որձ»:

Հարցազրույցը վարեց Արմինե Ղուկասյանը



## ՀՅՈՒՐԱՍՐԱՀ

### Կանայք կանանց մասին, կանանց համար

*Անվիճելի է այն իրողությունը, որ կինն ընդանիքի սյունն է: Սակայն խելացի կինը միշտ էլ այնպես է անում, որ փղամարդուն թվում է, թե ինքն է որոշումներ ընդունում: Հասարակական կյանքում, քաղաքականության մեջ, շատ բնագավառներում կինն իրեն դրսևորում է այնպես, ինչպես իր ընդանիքում՝ պարասխանապուր, սրբացավ, անաչառ, փանփիրոջ հոգածությամբ: «Հյուրասարահում» հավաքվածները քաղաքի կյանքում իրենց ձեռագիրն ունեցող կանայք են, որոնք ղեկավարում են կոլեկտիվներ, ունեն փորձ և, բնականաբար, ասելիք առաջադրված հարցերի վերաբերյալ:*



Արիս Մուրադյան

Լճաշենի Ա. Տեր-Ղրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն

• **Հաճախ ենք լսում, թե կնոջ համար դժվար է մեր հասարակության մեջ ղեկավար դեր գրավել: Դուք համամի՞տ եք:**

- Ես հիացած եմ հայ կնոջ կորովով: Հայուհուն հաջողվում է ստանձնած գործի, թեկուզ և բարդ գործի ահռելի բեռը վստահորեն կրել՝ պահպանելով բնածին թովչանքը: Ղեկավար աշխատելիս հայ կինը պահպանում է իր մարդկային նկարագիրը, ուժեղ է, չի ընկրկում դժվարությունների առջև, բարեխիղճ աշխատող է, եռանդուն կազմակերպիչ, գործի մեջ հոգի դնող:

• **Կնոջն ի՞նչն է օգնում և խանգարում ղեկավարման մեջ:**

- Կնոջն օգնում է նրա խոհեմությունը, խաղաղապաշտ լինելը, զսպվածությունը, աշխատասիրությունը, առաքինությունը և ամենագլխավորը՝ համբերատարությունը: Հայ ընտանիքի ավանդականությունը երբեք չի խախտվում հայ կնոջ կողմից. նա սիրում է իր ընտանիքը, համեղ կերակուրներ պատրաստում և ստեղծում ընտանեկան ջերմ մթնոլորտ: Խանգարում է հանիրավի քննադատությունը:

• **Որքանով է, ըստ ձեզ, կարևոր կանանց մասնակցությունը օրենսդիր, գործադիր իշխանություններում: «Պատգամավորը փղամարդու գործ է» կարծրափայր համարե՞նք իրողություն:**

- Իշխանության յուրաքանչյուր ոլորտում հայ կինն ունի իր նկարագիրը, որն ամբողջանում է խոհեմությամբ, բարեխիղճությամբ: Հայուհուն՝ ծաղկի պես նուրբ հոգում և փխրուն սրտում այնքան լույս ու ջերմության, բարության և մարդասիրության հունդեր կան, որ կինը, դրանք շռայլելով, ցանկացած ոլորտի աշխատանքի բեռը պատվով ու պատասխանատվությամբ է կրում: Ակնհայտ է նաև այն իրողությունը, որ պատգամավոր լինելը միայն տղամարդու գործ չէ:



Անահիտ Հովհաննիսյան

Քաղաքապետարանի կրթության, մշակույթի, երիտասարդության հարցերի բաժնի վարիչ

**• Հաճախ ենք լսում, թե կնոջ համար դժվար է մեր հասարակության մեջ ղեկավար դեր գրավել: Դուք համամի՞տ եք:**

- Պետության մեջ կինը նպաստում է իշխանություն-ժողովուրդ կապի ամրապնդմանը և կարգավորողի դեր ունի ոչ թե ընդդիմադիր կեցվածքով, այլ կառուցողական ծրագրերով: Միայն նրբանկատ, զգայուն, հետևողական կինը կարող է գորավիզ լինել օգնության կարոտ անհատներին ու ընտանիքներին՝ լուծելով գլոբալ հարցեր, իր լուծման ներդրելով երկրի տնտեսական, սոցիալական, մշակութային կյանքում:

**• Կնոջն ի՞նչն է օգնում և խանգարում ղեկավարման մեջ:**

- Հայ կինը հազարամյակներ ի վեր ընտանիքի սյուն է համարվել: Քաջարի զավակներ է պարգևել երկրին ու միշտ պահպանել է ներքին ազատությունը: Եվ դա օգնում է նաև ղեկավարելիս: Ավելացնեմ նաև շրջահայացությունն ու հավասարակշռվածությունը: Ինձ թվում է՝ եթե կինը նպատակ է դրել իր առջև, ոչ մի դժվարություն չի կարող արգելք դառնալ:

**• Որքանով է, ըստ չեզ, կարևոր կանանց մասնակցությունը օրենսդիր, գործադիր իշխանություններում: «Պատգամավորը փրամարդու գործ է» կարծրափայլ համարե՞նք իրողություն:**

- Ես համոզված եմ, որ կառավարման համակարգում որքան շատ լինեն կանայք, այնքան ավելի շոշափելի արդյունքներ կունենանք: Տարանջատում չպիտի դրվի՝ պատգամավորը կի՞ն է, թե՞ տղամարդ. պիտի օգտագործել երկուսի պոտենցիալ հնարավորությունները, և արդյունքը չի ուշանա:



Ռամիրա Հարությունյան

Հ. Այվազովսկու անվան արվեստի դպրոցի տնօրեն

**• Հաճախ ենք լսում, թե կնոջ համար դժվար է մեր հասարակության մեջ ղեկավար դեր գրավել: Դուք համամի՞տ եք:**

- Հայ կնոջ իրական դերը տանտիկին լինելն է. նա լիիրավ տանտիրուհի է: Բայց այսօր լիարժեք չէ այդ դերակատարումը, քանզի տունն այդ կիսախարխուլ է: Այդ է պատճառը, որ չնայած դժվարություններին՝ կինն ըմբոստանում է և հասարակական-քաղաքական զարգացումների մեջ ներկայանում տղամարդուն հավասար՝ մնալով տղամարդանեծար:

**• Կնոջն ի՞նչն է օգնում և խանգարում ղեկավարման մեջ:**

- Ժամանակակից հայ կինը տաղանդավոր է, ունի մտավոր բարձր ներուժ, որոնք էլ օգնում են ղեկավարման մեջ: Մեծ կենսափորձով ուսյալ կանայք պետք է տեղ ունենան յուրաքանչյուր բնագավառում, հասարակական-քաղաքական շարժումների առաջին շարքերում:

**• Որքանով է, ըստ չեզ, կարևոր կանանց մասնակցությունը օրենսդիր, գործադիր իշխանություններում: «Պատգամավորը փրամարդու գործ է» կարծրափայլ համարե՞նք իրողություն:**

- Հայ ժողովուրդը դարձյալ կանգնած է ընտրության առջև: Շատ կարևոր է լինելու, թե ինչպիսի ընտրությունների արդյունքում է ձևավորվելու օրենսդիր մարմինը:

Շատ եմ կարևորում նաև կանանց մասնակցությունը այդ ընտրություններին: Այո՛, թող առաջադրվեն և ընտրվեն կրթված, խելացի և արժանավոր կյանքի ճանապարհ անցած կանայք: Նրանք մտավոր արժեքներով չեն զիջում տղամարդկանց, նույնիսկ իրենց բնագոյային կարողություններով գերազանցում են նրանց: Բացի այդ, կանայք գաղափարներին ավելի հավատարիմ են և, հետևապես, քաղաքականություն մտնելով՝ հստակ գիտակցում են իրենց անելիքը և ավելի շուտ կողմնորոշվում:

Հայ կանայք, որ դարերի ընթացքում ունեցել են նշանակալի դեր պատմության մեջ և քաղաքական կյանքում, պետք է ընդունեն օրվա հրամայականը, մասնակցեն մեր հայրենիքի համար բախտորոշ ու ճակատագրական բոլոր իրադարձություններին:



Սվետլա Կարապետյան  
«Գալիք» (թիվ 4) մանկապարտեզի տնօրեն

• **Հաճախ ենք լսում, թե կնոջ համար դժվար է մեր հասարակության մեջ ղեկավար դեր գրավել: Դուք համամի՞տ եք:**

- Ոչ, համամիտ չեմ այդ կարծիքին, որովհետև կանայք բազմիցս ապացուցել են, որ կանայք կարող են ղեկավարել և ոչ պակաս:

• **Կնոջն ի՞նչն է օգնում և խանգարում ղեկավարման մեջ:**

- Գեկավարման մեջ առաջին հերթին օգնում է նրբանկատությունը, որովհետև շատ հարցեր լուծվում են նրբանկատորեն: Գեկավարը պիտի լինի նաև հոգեբան, ինչը, թող ինձ ներեն մեր հարգարժան տղամարդիկ, կնոջը տրված է ի վերուստ: Այս հարցում օգնում են նաև ընտանիքի աջակցությունն ու ներողամտությունը: Սակայն խանգարում է էմոցիան, որը, այս անգամ էլ թող ներեն սիրելի կանայք, հաճախ կարող է չափից շատ լինել:

• **Որքանով է, ըստ չեզ, կարևոր կանանց մասնակցությունը օրենսդիր, գործադիր իշխանություններում: «Պատգամավորը տղամարդու գործ է» կարծրապիպը համարե՞նք իրողություն:**

- Բացարձակ դեմ եմ այդ կարծրատիպին. ըստ իս, ոչ միայն օրենսդիր և գործադիր իշխանություններում պիտի զգալի լինի կնոջ ներկայությունն ու խոսքը, այլև հանրապետության նախագահի օգնականը կամ խորհրդականը պետք է կին լինի: Տղամարդուն անհրաժեշտ են կնոջ խորհուրդները:

Հարցազրույցը վարեց  
Արմինե Ղուկասյանը

**Ինչու կազմակերպվեց Սևանի երիտասարդ կանանց լիդերության դպրոցը**



Սևանը, ինչպես մեր հանրապետության շատ քաղաքներ, իր բազմաթիվ կենսական ու առօրեական խնդիրներից զատ ունի առանցքային խնդիրներ, մասնավորապես՝ հասարակական ակտիվության ոլորտում:

Շփվելով երիտասարդների հետ՝ զգացել եմ, որ հատկապես երիտասարդ կանայք ու աղջիկները հասարակական ակտիվության խնդիր ունեն: Ելնելով փոքր քաղաքներին բնորոշ առանձնահատկություններից՝ կանայք և աղջիկները, չնայած մեծ ցանկությանը, խուսափում են մտնել հասարակական կազմակերպությունների կամ քաղաքական կուսակցությունների շարքեր, առավել ևս, գրավել ղեկավար պաշտոններ:

Երիտասարդ կանանց և աղջիկների լիդերության դպրոցը կազմակերպվեց հենց այդ սառույցը կոտրելու նպատակով, որպեսզի երիտասարդ կանայք և աղջիկները չդառնան ձևավորված ու կարծրացած հայացքների ու մոտեցումների գերին: Մասնակիցները, մի կողմից, իրենց գիտելիքների պաշարին ավելացրեցին նոր ու անհրաժեշտ գիտելիքներ, որը հնարավորություն է տալիս բարձրացնելու ինքնավստահության մակարդակը, իսկ մյուս կողմից՝ հնարավորություն ստեղծվեց, որ ստաբեր բնագավառներ ներկայացնող կանայք ու աղ-

ջիկները շփվեն միմյանց հետ: Վերջինս, ըստ իս, ամենակարևոր ձեռքբերումն էր:

Լիդերության դպրոցում ստացած գիտելիքները կնպաստեն աշխարհայացքի ձևավորմանն ու ընդլայնմանը: Սրանք գործնական գիտելիքներ են, որոնք կարող են կիրառվել թե՛ աշխատանքի ընթացքում, թե՛ կոնֆլիկտների ժամանակ, թե՛ առօրյա կյանքում, նույնիսկ կենցաղում: Շատ հաճախ օրենքների չիմացությունը անհիմն վարչական որոշումների պատճառ է դառնում: Դպրոցում ստացած իրավական գիտելիքները հնարավորություն տվեցին ավելի հստակ պատկերացնելու սեփական իրավունքներն ու կիրառելու որպես աշխատող, որպես գործատու և որպես քաղաքացի: Գիտելիքների բազան հնարավորություն կտա ցուցաբերելու հասարակական ակտիվություն, քանզի որքան շատ է մեզ շրջապատող խնդիրների մասին տեղեկատվությունը, այնքան ավելի ակտիվ ու արագ ենք արձագանքում: Եվ քանի որ երիտասարդ կանանց ու աղջիկների լիդերության դպրոցի մասնակիցներն առավել ակտիվ և իրենց բնագավառներում հեղինակություն ունեցող կանայք ու աղջիկներ էին, ես ավելի քան համոզված եմ, որ ստացած գիտելիքները չեն քարանա, այլ շրթայածն կփոխանցվեն հասարակության մյուս անդամներին:

**Գոհար Մնացականյան**

«Սևան» երիտասարդական ակումբ»  
ՀԿ-ի փոխնախագահ, Համալսարանական  
կրթությանը կանանց ատոցիացիայի Երևանի  
կանանց լիդերության դպրոցի 25-րդ հոսքի շրջանավարտ





## Ինչու՞ կազմակերպվեց Սևանի երիտասարդ կանանց լիդերության դպրոցը և ինչ տվեց



**Ա**յսօրվա իրականությունը ցույց է տալիս, որ համայնքների հասարակական-քաղաքական որոշումների ընդունման մակարդակում կանանց ներգրավվածությունն ու մասնակցությունը բավական ցածր մակարդակում է: Այս խնդրին անհրա-

տեն կանանց դերի բարձրացմանը հասարակության մեջ:

Բացի այդ, կարևորվում է այն փաստը, որ մեծանում է հաղորդակցումը երիտասարդ կանանց միջև, ինչն իր հերթին ինչ-որ առումով կարող է նպաստել մրցակցության բարձրացմանը:

Ընդհանուր առմամբ, այս ծրագրի նպատակն է կայուն, բազմապիսի գիտելիքների միջոցով բարձրացնել համայնքում երիտասարդ կանանց հասարակական-քաղաքական ակտիվության մակարդակը, ընդլայնել Ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի, «Սևան» երիտասարդական ակումբ» ՀԿ-ի և ՀՀԿ-ի ցանցը:

Ժեշտ է լուրջ մոտեցում ցուցաբերել և նախաձեռնել որոշակի միջոցներ: Հակառակ դեպքում յուրաքանչյուր ուղրտում կնկատվի խիստ անհանդուրժողություն: Իսկ դա իր հերթին ծնում է խնդիրներ ինչպես պետական մասշտաբով՝ քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության ձևավորման հետ կապված, այնպես էլ անհատական՝ անհատի ինքնահաստատվելու հարցում: Իհարկե, հնարավոր չէ խնդիրը լուծել միանգամից, «կախարդական փայտիկի մեկ շարժումով», այդ իսկ պատճառով անհրաժեշտ է խնդրի լուծմանն ուղղված քայլեր կատարել ինչպես ըստ հասարակական ոլորտների, այնպես էլ ըստ տարածաշրջանների, այսինքն՝ մասնավոր, արդյունավետ գործողությունները կարող են հանգեցնել խնդրի մասշտաբային լուծման:

Այսօր նկատվում է, որ կանայք ավելի շատ են ձգտում ներգրավվել և որոշակի գործունեություն ծավալել հասարակական ոլորտում: Այդ երևույթի բացատրությունը թերևս այն է, որ հասարակական կառույցներում ցուցաբերում են անշահախնդիր վերաբերմունք յուրաքանչյուր սոցիալական խմբի հանդեպ: Իսկ այդ մթնոլորտում կանայք ավելի շատ են գերծ մնում ազդեսիվ վիճակներից և կարողանում են ավելի մեղմ քաղաքականություն վարել, ինչն անհնար է քաղաքական ոլորտում:

Սևանի համայնքը տարածքային առումով փոքր է, և գեներային հիմնախնդիրներն այստեղ ևս բացառություն չեն: Ըստ այդմ, նպատակահարմար համարվեց «Համայնքում երիտասարդ կանանց քաղաքացիական և քաղաքական ակտիվացման խթանում» փոքր դրամաշնորհի շրջանակներում իրականացնել «Երիտասարդ կանանց լիդերության դպրոց», որը հնարավորություն կտա երիտասարդ կանանց գիտելիքներ ստանալու հասարակական բոլոր ոլորտների վերաբերյալ:

ՀԿ-ները շահույթ չիտապնդող կառույցներ են, որոնց հիմնական նպատակը հասարակական շահի պաշտպանությունն է: Կարելի ենթադրել նաև, որ վերջինս այն շարժիչ ուժն է, որը խթանում է հասարակական ոլորտում համագործակցությունը: Այսինքն՝ այստեղ գործում է «Մեկը բոլորի և բոլորը մեկի համար» սկզբունքը: Այդ համագործակցությունը արդյունավետ եղավ նաև այս ծրագրի շրջանակներում: «ՍԵԱ» ՀԿ-ն և ասոցիացիայի Սևանի մասնաճյուղը, հետապնդելով միևնույն գաղափարը, հավասարազոր ներդրումներով իրականացրեցին այս ծրագրի հետ կապված բոլոր միջոցառումները: Այդ համագործակցությունը հիմք դարձավ տվյալ կառույցների միջև փորձի փոխանակման և համալրման համար, ինչպես նաև նախադրյալ՝ հետագայում որոշակի համատեղ գործունեություն ծավալելու համար:

Իսկ ինչու՞ շեշտը դրվեց հենց երիտասարդ կանանց վրա:

Քանի որ այդ տարիքային խմբի (22-30) ներկայացուցիչները կյանքի այն փուլում են, երբ փորձում են իրենց տեղը գտնել հասարակության մեջ և ինքնահաստատվել: Իսկ այս փուլում այն գիտելիքները, որոնք տալիս է դպրոցը, երիտասարդների համար առավել կիրառական բնույթ կկրեն և կծառայեն իրենց նպատակին, այսինքն՝ կնպաս-

### Արփինե Մանուկյան

Սևանի բժշկական ուսումնարանի դասախոս, Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիայի Երևանի կանանց լիդերության դպրոցի 25-րդ հոսքի շրջանավարտ



## Լիդերության դպրոց. առաջին շրջանավարտները

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի հիմնադրած կանանց լիդերության դպրոցը, որ 9-ամյա պատմություն ունի, որդեգրել է մի շատ կարևոր սկզբունք՝ գիտելիքն է քաղաքական ակտիվության և պատասխանատվության նախադրյալը:

ընդունելության էր հրավիրել համայնքի ղեկավար Գևորգ Մալխասյանը, որ նաև դպրոցի կազմակերպչական աշխատանքների հովանավորն էր:

Համայնքի ղեկավարի ողջույնից հետո դպրոցի շրջանավարտներին և հրավիրյալներին շնորհավորեց, նման ձեռնարկների դերն ու նշանակությունը ևս մեկ անգամ կարևորեց Ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի նախագահ Անահիտ Ավետիսյանը:



Դպրոցը մի կառույց է, որը գեներային, քաղաքական, իրավական և տնտեսական գիտելիքների միջոցով բարձրացնում է կանանց իրավաքաղաքական գրագիտության մակարդակը, սովորեցնում արդի հասարակական-քաղաքական գործունեության կազմակերպման տեխնոլոգիաները, միաժամանակ մի միջավայր է, որտեղ ձևավորվում է ժողովրդավարության նոր մշակույթ՝ նոր որակներով:

Հանդիսավոր արարողությանը մասնակցում էր Ասոցիացիայի նախագահ Ջեմմա Հասրաթյանը: Նա խոսեց նման դպրոցների գործունեության անհրաժեշտության մասին, միաժամանակ հույս հայտնեց, որ դպրոցը շարունակելու է իր առաքելությունը՝ համալրելով ուկնդիրների բանակը:

Շնորհավորանքներին հաջորդեց վկայագրերի հանձնումը:

Լիդերության դպրոցի ունկնդիր կանայք հնարավորություն են ունեցել ստանալու շատ հարցերի պատասխաններ, և ամենակարևորը՝ նրանց միմյանց հետ շփվելու հնարավորություն է ընձեռվել:

Լիդերության դպրոցի գործունեությունը մայրաքաղաքից տարածվել է մարզեր, և այսօր արդեն Ասոցիացիայի մասնաճյուղերն են ստեղծում նմանատիպ դպրոցներ:



Սևանի մասնաճյուղն էլ անմասն չմնաց այդ հարցում: 2008 թ. լիդերության դպրոցն ընդունեց իր առաջին ունկնդիրներին, որոնք տարբեր տարիքի, մասնագիտության տեր և հիմնականում իրենց քաղաքական ընտրությունը կատարած կանայք և աղջիկներ էին:

Հանդիպման վերջում դպրոցի գործունեության շարունակականությունն ապահովելու և երկրորդ հոսքի պարապմունքները կազմակերպելու նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց:

Սևանում գործող լիդերության դպրոցի առաջին 23 շրջանավարտները «Հասարակական-քաղաքական գործունեության կազմակերպիչ» վկայականները ստացան հանդիսավոր պայմաններում: Նրանց

**Արմինե Ղուկասյան**



## Ներկայացնում են Սեանի կանանց լիդերության դպրոցի 2-րդ հոսքի շրջանավարտները



### Գայանե Մանուկյան

*STV-1 հեռուստաընկերության հեռուստալրագրող*

Կարծում եմ՝ լիդերության այս դասերը ինձ ավելի ուժ ու վստահություն տվեցին սեփական իրավունքները պաշտպանելու համար: Հայաստանի օրենսդրական դաշտում կարծես թե շատ բացեր չկան, պարզապես շատ հաճախ այդ օրենքները կյանք չեն մտնում: Գրա պատճառներից մեկն էլ մարդկանց անիրազեկությունն է՝ թե՛ օրենքների, թե՛ սեփական իրավունքների առումով: Կանանց լիդերության դասերի ընթացքում շատ հանգամանակից ներկայացվեցին մեր իրավունքները, պարտականությունները, օրենքները, որոնցով կարող ենք պաշտպանել մեր անձը որևէ խտրականության դրսևորման կամ իրավունքի խախտման դեպքում:

կանության դրսևորման կամ իրավունքի խախտման դեպքում:

### Լիլիթ Գրիգորյան

*«Բյուրակն» կրթահամալիրի մանկավարժ, ասպիրանտ*



Այս դպրոցում ինձ բախտ վիճակվեց հանդիպել հրաշալի մարդկանց, որոնք կազմակերպեցին ու անցկացրին հետաքրքիր դասընթացներ: Ստեղծվեց մի միջավայր, որտեղ կարողացանք բացահայտել ինքներս մեզ՝ մեր մեջ գտնելով լիդերին բնորոշ հատկանիշներ: Հնարավորություն ընձեռվեց լսելու գիտելիքներով հարուստ, մեծ փորձ ունեցող մարդկանց, ինչի արդյունքում ձեռք բերեցինք իրավական, քաղաքական, տնտեսական գիտելիքներ:



### Աննա Մինասյան

*«Սևան» երիտասարդական ակումբ» ՀԿ-ի ակոնամ, անգլերենի ուսուցիչ*

Լիդերության դպրոցը հիանալի հնարավորություն տվեց մեզ և մեր շրջապատը առավել լավ ճանաչելու համար: Իմ կարծիքով, նման իրազեկման հանդիպումները պետք է շարունակական լինեն՝ ընդգրկելով նորանոր խմբեր:

### Կարինե Ասատրյան

*Սեանի բժշկական ուսումնարանի ուսուցիչ, Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիայի Սեանի մասնաճյուղի ակոնամ*



Յուրաքանչյուր կին ոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է իմանալ իր երկրի օրենքները, որպեսզի կարողանա պաշտպանել իր անձն ու շահերը: Կանանց լիդերության դպրոցի պարապմունքները մեծ նշանակություն ունեին կանանց կրթելու, իրազեկելու, հասարակական հիմնախնդիրները վեր հանելու գործում:



### Արփինե Մինասյան

*ԵՊՀ լրագրության ֆակուլտետի ուսանող, «ՍԵԱ» ՀԿ-ի ակոնամ*

Սկզբում, երբ հրավիրվեցի մասնակցելու կանանց լիդերության դպրոցի պարապմունքներին, թերահավատություն կար: Կարծում էի՝ գիտեմ այն ամենը, ինչ պիտի ներկայացվեր դպրոցում: Սակայն առաջին պարապմունքից հետո փոխվեց վերաբերմունքս, և հետագա հանդիպումների ժամանակ հասկացա, որ շատ թեմաներ նորություն են ինձ համար, դրանց մասին պատկերացում ունենալը պարզապես անիրաժեշտություն է մեր օրերում:



## Կանանց հասարակական-քաղաքական դերը փոքր քաղաքներում

Ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի հերթական նախաձեռնությունը՝ «Կանանց հասարակական-քաղաքական դերը փոքր քաղաքներում» համաժողովը, իրականացավ «Սևանի համայնքում երիտասարդ կանանց քաղաքացիական ակտիվացման խթանում» ծրագրի շրջանակներում: Համաժողովը ձեռքբերումներն ի մի բերելու, փոքր քաղաքում կանանց հասարակական գործունեության առանձնահատկությունների, զարգացման հեռանկարների, քաղաքացիական նախաձեռնությունների մասին խոսելու հիանալի հնարավորություն էր:



Համաժողովի մասնակիցները՝ ՀԿ-ների նախագահներ ու ներկայացուցիչներ, ներկայացնում էին տարբեր բնագավառներ և տարբեր փորձառություն ունեին: Այս հանգամանքն էլ հնարավորություն տվեց համաժողովը դարձնելու արդյունավետ, ապահովելու բազմակարծության մթնոլորտ և ակտիվ ու կառուցողական քննարկումներ:

Բանախոսներն իրենց ելույթներում անդրադարձան մի շարք հրատապ հարցերի, որոնք ներկա փուլում կարևոր նշանակության ունեն կանանց կառույցների կայացման, կանանց դերի բարձրացման գործում:

Սևանի համայնքի ղեկավարի խորհրդական Ռոբերտ Ռ-աֆայելյանը ՀԿ-ների և իշխանության կառույցների սոցիալական համագործակցությունը դիտարկեց քաղաքացիական հասարակության համատեքստում և նկատեց, որ միայն գործընկերության հարաբերությունների շնորհիվ կարելի է էական տեղաշարժերի հասնել:

Ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի նախագահ Անահիտ Ավետիսյանը վեր հանեց փոքր քաղաքներում կանանց հասարակական-քաղաքական գոր-

ծունեության առանձնահատկությունները, հնարավորությունները, խոչընդոտները՝ միաժամանակ նշելով հեռանկարները:

Աշխույժ մթնոլորտում անցավ ման կլոր սեղանը՝ «Կանանց քաղաքացիական նախաձեռնությունները» թեմայով: Աշխատանքային երեք խմբերը ներխմբային քննարկումների արդյունքում առանձնացրին համայնքի առաջնահերթ հիմնախնդիրները և հանդես եկան դրանց լուծման որոշակի առաջարկություններով:

Համայնքի բնակչության կրթության և իրազեկման խնդրի լուծումը որոշվեց իրականացնել հեռուստահաղորդումների շարքի կազմակերպման միջոցով: Առաջարկվեց ուսումնասիրել հասարակական կարծիքը, որն էլ հնարավորություն կտա բացահայտելու առկա կարիքները և պատկերացում կազմելու առաջիկա ծրագրերի ձևաչափի վերաբերյալ: Իսկ համայնքում աշխատատեղերի ստեղծման խնդրի լուծման նպատակով առաջարկվեց կազմակերպել «աշխատանքային շուկաներ»:

Կանանց լիդերության դպրոցի 25-րդ հոսքի շրջանավարտ, Սևանում լիդերության դպրոցի 2-րդ հոսքի կազմակերպիչ Արփինե Մանուկյանը ներկայացրեց համայնքում իրականացրած իր ուսումնասիրությունը՝ «Կանանց հասարակական գործունեության առանձնահատկությունները Սևանի համայնքում»: Աշխատանքը ծավալուն էր, բազմակողմանի վերլուծված և ուշագրավ եզրահանգումներով:

Լիդերության դպրոցի մյուս կազմակերպիչը՝ Գոհար Մնացականյանը, «Կանանց հասարակական գործունեությունը մարզերում. առանձնահատկությունները և զարգացման հեռանկարները» թեմայով զեկուցմամբ մասնավորեցրեց կանանց ակտիվ հասարակական գործունեությունը, այդ ճանապարհին հանդիպող դժվարությունները: Նա հանգեց այսպիսի եզրակացության. «Կնոջ դերի բարձրացումը մեր հասարակական կյանքում անխուսափելի է, որը կհանգեցնի կնոջ դերի բարձրացմանը քաղաքական կյանքում»:

Համաժողովի աշխատանքներին մասնակցում էին Ասոցիացիայի փոխնախագահ Գայանե Արմաղանովան և քաղաքապետարանի ներկայացուցիչներ:

Արմինե Ղուկասյան



**Համալսարանական կրթությամբ կանանց սոցիալիստիկ Սևանի մասնաճյուղի աշխատանքային օրագրից**

**ԿԱՆԱՅՔ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Համալսարանական կրթությամբ կանանց սոցիալիստիկ Սևանի մասնաճյուղի և Կոտայքի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի համատեղ նախաձեռնությամբ Սևանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում անցկացվեց հերթական սեմինարը «Կանանց քաղաքացիական և քաղաքական մասնակցության հնարավորությունները» թեմայով: Թեման արդիական էր, քննարկման արժանի, որը հնարավորություն էր ընձեռելու լսարանին լինելու ոչ միայն ունկնդիր, այլև՝ ակտիվ մասնակից: Ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի նախագահ Անահիտ Ավետիսյանը ողջունեց սոցիալիստիկ անդամներին, հրավիրվածներին՝ կարևորելով նման հանդիպումների դերը քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին:

Հանդիպումը պատեհ առիթ էր, որ Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի փոխտնօրեն Կարինե Մարգարյանը ներկայացներ իրենց կենտրոնի առաքելությունն ու գործունեությունը:

Այնուհետև բանախոսը՝ Համալսարանական կրթությամբ կանանց սոցիալիստիկ Նոր Հաճնի մասնաճյուղի նախագահ, Կոտայքի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի ղեկավար Անահիտ Աղոյանն անդրադարձավ «Կանանց քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը որպես հասարակության ժողովրդավարացման գործոն» թեմային՝ կարևորելով մի շարք խնդիրներ ու գործոններ: Հայաստանի քաղաքական ասպարեզում գերակշռում են տղամարդիկ, չնայած բնակչության կեսից ավելին կանայք են: Ի լրումն՝ կանանց 60%-ը բարձրագույն կրթություն ունի:

Թեև կանայք ներկայացված են բոլոր նախարարություններում և կառավարական մարմիններում, գործադիր իշխանությունը և օրենսդիր մարմինը գենդերային անհավասարության բուրգ է հիշեցնում. որքան բարձր է պաշտոնը, այնքան քիչ է հավանականությունը, որ այն կին կբաղեցնի: Չպետք է անտեսել մի կարևոր գործոն՝ սեփական անձի գնահատումից պիտի սկսել այն գործընթացը, որը կնոջը տանելու է դեպի քաղաքականություն, ավելին՝ նրան դարձնելու է քաղաքական դեմք: Պակաս կարևոր չէ կին-հասարակություն հարաբերությունը, որը դարձավ մասնակիցների քննարկման առարկան:

Ասոցիացիայի նախագահ Անահիտ Ավետիսյանի ներկայացրած թեմաները՝ «Կանանց կրկնակի ծանրաբեռնվածություն. ընտանիք, աշխատանք, առաջընթաց» և «Երիտասարդության դերը քաղաքական կյանքում», մասնակիցներին բանավեճ ծավալելու, կարծիքներ փոխանակելու հնարավորություն ընձեռեցին:

Ժամանակն է, որ կանայք չսահմանափակվեն օջախ ու ավանդույթներ պահպանողի կարգավիճակով: Նրանց ինքնադրսևորման ասպարեզները շատ ավելին են. կանանց ներուժը, հնարավորություններն ու կրթությունը պիտի հնարավորինս օգտագործվեն, նախանձախնդիր պիտի լինեն նաև հենց իրենք՝ կանայք:



Պարապմունքի հաջորդ թեման էր «Լիդերության տիպերն ու առանձնահատկությունները»: Ներկայումս հասարակությունը լիդերության, լիդերի ընտրության խնդիր ունի: Կա նաև լիդեր կանանց պահանջ, ու անհրաժեշտ է կնոջը տեսնել ոչ միայն ընտանիքում, այլև հասարակական-քաղաքական կյանքում, որոշումների կայացման մակարդակում: Դրան նպաստում է 2004 թ. ՀՀ կառավարության ընդունած «Կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը», որը պիտի իրականացվի մինչև 2010թ.: Ծրագիրը կոչված է «ապահովելու իրավունքների և հնարավորությունների հավասարություն կանանց և տղամարդկանց համար որոշումներ ընդունելու գործընթացում և սոցիալ-քաղաքական ոլորտներում»:

Արմինե Ղուկասյան



## Կանանց հիմնախնդիրները նաև հասարակությանն են

«Ընդհանրապես գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագիրը, որի մեկնարկը 2008 թ. մարտին էր, նպատակ ունի կովկասյան երեք հանրապետություններում ստեղծել գենդերային բռնությունների նվազեցմանը նպաստող միջավայր և օժանդակել այդ դաշտում միջազգային պարտավորությունների իրականացմանը:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի վարչության և Սևանի մասնաճյուղի կազմակերպած հերթական հանդիպումն էլ՝ «Ընդհանրապես գենդերային բռնության Հայաստանում» թեմայով, այդ ծրագրի շրջանակներում էր:

Վերջին տարիներին բավական արդիական դարձած «գենդեր» հասկացությունը նորովի մեկնաբանման կարիք ունի, որը նաև Ասոցիացիայի աշխատանքների հիմքում է ընկած:

Հանդիպման ընթացքում Երևանի ճարտարապետական և շինարարական պետական համալսարանի միջին մասնագիտական կրթության և նախաբակալավիատի գծով պրոռեկտոր Անահիտ Հովհաննիսյանն անդրադարձավ գենդերային խտրականության թեմային:

Բանախոսը մասնավորապես նշեց, որ գենդերային խտրականության գործերակերպը հանգեցնում է կանանց և տղամարդկանց սոցիալական դիրքերի և հնարավորությունների անհամաչափության: Նման անհամաչափության դրսևորումներից է կանանց ոչ բավարար ներկայացվածությունը որոշումների ընդունման տարբեր մակարդակներում: Ազգային ժողովում 131 պատգամավորներից միայն 11-ն են կին (8.4%), 18 նախարարներից՝ 2-ը, 65 փոխնախարարներից՝ 1-ը, 10 մարզպետներից՝ 1-ը, քաղաքապետների թվում կանայք չկան, 86 գյուղապետներից՝ 23-ը, դատական համակարգում կանայք կազմում են 22%:

Գենդերային խտրականությունն իր դրսևորումներն ունի նաև աշխատաշուկայում:

Թեմայի շուրջ ծավալվեց հետաքրքիր բանավեճ: Հանդիպման մասնակից կանայք, որոնք ներկայացնում էին տարբեր բնագավառներ, փորձեցին վերլուծել իրական պատկերը, ցույց տալ գենդերային հավասարու-

յան ապահովման հնարավոր ելքերը:

Գենդերային բռնության երևույթները և դրսևորումները նույնպես դարձան երկօրյա հանդիպման քննարկումների առանցքը: Գեղարքունիքի մարզպետարանի կանանց և երեխաների պաշտպանության բաժնի պետ Մամիկոն Գալոյանը, ծրագրի փորձագետ Անահիտ Ադոյանը բռնություն երևույթը ներկայացրին ամբողջության մեջ՝ ներընտանեկանից մինչև թրաֆիքինգ, իրավական փաստաթղթերից մինչև միջազգային նախաձեռնություններ: Նյութը մատուցվեց վիճակագրական տվյալների միջոցով: Աշխարհում կանանց 16-50%-ը ենթարկվել է ներընտանեկան բռնության: «Ներընտանեկան բռնությունը մեծ տարածում ունի Հայաստանում» հարցին տրվել են այսպիսի պատասխաններ՝ 22% - շատ մեծ, 28.3% - ինչ-որ չափով, 33.8% - դժվարացել են պատասխանել:

Ներկայացվող թեմաների վերաբերյալ բերված վիճակագրական տվյալները, ցուցադրված ֆիլմը, իրավիճակային վարժություններն օգնեցին առավել խորությամբ ընկալելու երևույթները, գնահատականներ տալու և հանդես գալու առաջարկություններով:

Ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի նախագահ Անահիտ Ավետիսյանը, ամփոփելով երկօրյա աշխատանքը, համոզմունք հայտնեց, որ կանանց հիմնախնդիրները չպետք է տարանջատել. դրանք ողջ հասարակությանն են: Նա միաժամանակ շնորհակալություն հայտնեց համայնքի ղեկավար Գևորգ Մալխասյանին Սևանում լիդերության դպրոցի կայացման գործում ցուցաբերած աջակցության համար, «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն Գագիկ Մարտիրոսյանին և բնապահպանության թանգարանի տնօրեն Էմմա Քոչարյանին հանդիպման մասնակիցներին թանգարանում հյուրընկալելու համար:

Ասոցիացիայի հերթական հանդիպման մասնակիցներն այս անգամ ոչ միայն լիդերության դպրոցի ուկրաինացիներն էին, այլև հանրակրթական դպրոցների «Իրավունք» առարկայաչափի դասավանդողները, ինչպես նաև քաղաքապետի աշխատակազմի քարտուղար Սուսաննա Խաչատրյանը:

## Քաղաքականությունը կանանց աչքերով

Ինչպես ցույց են տալիս քաղաքական զարգացումները, կանանց մասնակցությունը պետական քաղաքականության ձևավորմանը նպաստում է դրա առավել հավասարակշռվածությանը, կայունությանը և մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: Այս գաղափարն էլ իր բազմաշերտ կողմերով արծարծվեց Համալսարանական կրթությամբ կանանց

ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի հերթական հանդիպման ընթացքում, որը տեղի ունեցավ 2008 թ. ապրիլին:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի նախագահ Անահիտ Ավետիսյանը, ողջունելով մասնաճյուղի անդամներին և իրավիճակներին, շնորհակալություն հայտնեց Ազգա-



յին պարկի բնապահպանության թանգարանի տնօրինությանը՝ հանձին նորանշանակ տնօրեն Էմմա Քոչարյանի, հյուրընկալության համար, ապա Էմմա Քոչարյանի անհատական ցուցահանդեսի առիթով նրան շնորհակալագիր հանձնեց:

Բանախոսը՝ Կոտայքի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի ղեկավար Անահիտ Ադոյանը, քննարկման սկզբում պատմական ակնարկ ներկայացրեց կանանց հասարակական շարժման և քաղաքական մասնակցության վերաբերյալ, որին էլ հաջորդեցին մասնակիցների հարցադրումները, կարծիքները, առաջարկությունները:

Ասոցիացիայի անդամ Հեղինե Ղարիբյանը նշեց, որ Հայաստանում ՀԿ-ների նկատմամբ վստահություն չկա. դրանք դիտվում են որպես «դրամաշնորհային» կառույցներ: Անահիտ Ադոյանն էլ փաստեց, որ ամեն դեպքում չարժե հաշվվողական քաղաքականությամբ ապրել, անհրաժեշտ է անցնել ակտիվ գործունեության, որն էլ պիտի կյանքի կոչվի կանանց հասարակական կազմակերպությունների միջոցով:

Ասոցիացիայի անդամ Ռուզան Հունանյանն էլ համոզված էր, որ պետք է մեծացնել ՀԿ-ների տեսակարար կշիռը՝ հօգուտ հասարակության քաղաքացիական ակտիվության:

Տղամարդկանց և կանանց հավասարակշիռ մոտեցումը կարող է նպաստել հասարակությունում քաղաքական դիմակայության մեղմացմանը: Կան հիմնախնդիրներ, որոնք տղամարդու աչքերով տեսանելի չեն: Կանանց 30% ներկայացվածությունը ձևական բնույթ չի կրում. այն անհրաժեշտություն է: Մրա միջոցով էլ ձևավորվելու է միջին տեսակետ, որը բերելու է որակական փոփոխություններ:

Քաղաքական և հասարակական փորձառությունը

մասնաճյուղի նախագահ Անահիտ Ավետիսյանին հանգեցրել է այն համոզման, որ կինը պետք է պայքարի, սակայն անհրաժեշտ է թիմ ունենալ: Թիմային աշխատանքի պակասն էլ հանգեցնում է ձախողումների:



Անհավասարակշռությունն առանձնապես սուր է դրսևորվում ընտրովի իշխանության և պետական կառավարման համակարգում: Չնայած կանանց 83%-ը և տղամարդկանց 60%-ը համարում են, որ կինը պետք է զբաղվի քաղաքականությամբ, քաղաքական վերնախավում կանայք բացակայում են: Միաժամանակ կանանց 12.9%-ը և տղամարդկանց 9.6%-ը համոզված են, որ «կանայք չեն քվեարկում կանանց օգտին»: Տղամարդկանց 12.6%-ը և կանանց 10.61%-ը նշում են կանանց ցածր քաղաքական ակտիվությունը և ոչ բավարար քաղաքական փորձը:

Ինչևէ, հասարակության առողջացման համար շատ կարևոր է կանանց մասնակցությունը քաղաքական գործընթացներին:

Հանդիպման վերջում բնապահպանության թանգարանի տնօրեն Էմմա Քոչարյանը մասնակիցներին տրամադրեց ««Սևան» ազգային պարկ» նկարների հավաքածուն:

## Հավասարությունը՝ ժամանակի հրամայական

Այսօր, ավելի քան երբևէ, օրակարգային է «կանանց հարցը», որն արդեն քանի տարի հասարակության քննության առարկան է:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան, իր գործունեության հիմքում դնելով գենդերային հիմնախնդիրները, փորձում է կանանց և տղամարդկանց հավասարությունը դարձնել հասարակական, քաղաքական և տնտեսական ոլորտների հրամայականը:

Ասոցիացիայի հերթական սեմինարն էլ, որ անցկացվեց Սևանում 2008 թ. օգոստոսին, այս և հարակից մի շարք հարցերին էր անդրադառնում: Կազմակերպիչներն էին Ասոցիացիայի վարչությունը և Սևանի մասնաճյուղը: Այս անգամ էլ սեմինարն անցկացվեց «Սևան» ազգային պարկի բնապահպանության թանգարանում, որի տնօրինությունն իր հյուրընկալ հարկի տակ ընդունել էր ասոցիացիա-

յի Սևանի մասնաճյուղը և տարբեր կուսակցություններ ներկայացնող կանանց:

Սեմինարը վարողը՝ Ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի նախագահ Անահիտ Ավետիսյանը, մասնավորեցրեց հանդիպման նպատակները, առաջիկա խնդիրները: Այնուհետև ելույթ ունեցավ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ, մանկավարժական գիտությունների թեկնածու Ջեմմա Հարաթյանը: «Չնայած 2004 թ. Հայաստանի կառավարության ընդունած «ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրին», որը նախատեսում է միջոցներ՝ ուղղված գենդերային հավասարության ձեռքբերմանը և կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնմանը, նրանց ներկայությունը պետական իշխանության կենտ-



րոնական, տարածքային մարմիններում ու տեղական ինքնակառավարման բոլոր մակարդակներում ցածր է մնում՝ ցուցադրելով իշխանության հայրիշխանական բուրգը»,-մասնավորապես նշեց իր խոսքում Ջեմմա Հասարայանը:

ԵՊՀ փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի ղոցենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Հովհաննես Հովհաննիսյանը անդրադարձավ քաղաքացիական հասարակության կառուցվածքին և գործառույթներին: Նա ընդգծեց. «ՀԿ-ների դերը հասարակության մեջ բավականին կանխորոշիչ է: Այլ հարց է, որ կառուցվածքային առումով դրանք գործում են, բայց փորձի առումով կայացած չեն: Այսօր քաղաքացիական մասնակցության սպասելի մասն խնդիր կա: Հրատապ է հասարակության ակտիվության խնդիրը, որը պետք է լուծվի ընդօրինակման ճանապարհով»:

Հասարակության մեջ շարունակում են մնալ այն խնդիրները, որոնց լուծումը պայմանավորված է քաղաքացիական մշակույթի ձևավորմամբ, ժողովրդավարական հաստատությունների գործունեությամբ և սկզբունքներով:

Կանայք նեղ մասնավոր խնդիրների շրջանակից պետք է դուրս գան՝ հասարակությանը և իշխանություններին մատուցելով առավել առանցքային հիմնախնդիրներ: Ամեն դեպքում առանցքային է հավասարակշռության սկզբունքի ներդրումը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի փոխնախագահ Լիլիթ Չաքարյանը կարևորեց գենդերային մշակույթի ներդրումը, որը մաս ժամանակի հրամայականն է: Ընդունված է եղել այն տեսակետը, թե հայ հասարակության մեջ գենդերային խնդիր չկա: Այն քաղաքական մշակույթ է, սակայն որքանով է ամրապնդված պետական մտածողության մեջ՝ մտորելու տեղիք է տալիս: Հասարակության գենդերային անհավասարակշռության հաղթա-

հարումը Հայաստանի համար հրատապ քաղաքական խնդիր է: Դրա լուծման շարժառիթը պետք է լինի քաղաքական կամքը՝ հիմնված այն ըմբռնման վրա, որ ժողովրդավարությունը ենթադրում է սեռերի հավասարության սկզբունքի իրականացում, որը, առանց կանանց մասնակցության, քաղաքական դասավորությունը կասկածի տակ է դնում: Կանանց մասնակցությունը պետական քաղաքականության ձևավորմանը նպաստում է դրա առավել հավասարակշռվածությանը, կայունությանը և հանգեցնում երկրի մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործման:

Կլոր սեղանի թեման՝ «Սոցիալական համագործակցություն: Կանանց հասարակական կազմակերպությունների դերը գենդերային հավասարության դրույթների իրականացման գործում», հետաքրքիր մտքերի և առաջարկների հնարավորություն ընձեռեց:

Ջեմմա Հասարայանը նշեց, որ պետք է աշխատել կուսակցություններում ներգրավված կանանց հետ: Ինչպես ցույց է տալիս փորձը, դասական կուսակցությունները քիչ են, կուսակցական ցուցակներում էլ կանանց անուններ գրեթե չկան: Հաճախ էլ կանայք «սևագործ» աշխատանք կատարողներն են, իսկ որոշումների ընդունման մակարդակում հայտնվում է մեկ-երկու անուն:

Կա այն մտայնությունը, որ հասարակական կարծիքը դեռևս ձևավորված չէ կնոջը ձայն տալու համար: Դրան զուգահեռ կա ևս մեկ խնդիր՝ կնոջ կերպարի ձևավորումը: Կանանց դեպի որոշումների կայացման մակարդակ առաջ մղելու հարցը համալիր մտեցում է պահանջում, իշխանական կառույցների և քաղաքական կուսակցությունների գենդերային անհավասարակշռության հաղթահարման համակարգված միջոցներ ձեռնարկելու ցանկություն և կամք:

Հանդիպման մասնակից կանայք վեր հանեցին մի շարք հիմնախնդիրներ, հանդես եկան առաջարկություններով:



**Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան երախտագիտություն է հայտնում հեղինակներին հոդվածները տրամադրելու համար:**

Համարը պատրաստել են **Ջեմմա Հասարայանը, Արմինե Ղուկասյանը, Իրինա Շահինյանը**  
Համարը խմբագրել է **Անահիտ Հարությունյանը**  
Ձևավորել է **Արթուր Բոյախյանը**

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա:  
Երևան 0002, Մարյան 22,  
Հեռ./Ֆաքս (37410) 53-68-02  
Email: jemma.hasratyan@gmail.com

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» ՍՊԸ-ի տպարանում:  
Երևան, Ավան, Դավիթ Մալյան 45,  
Հեռ. 54-49-82 (գրասենյակ),  
62-38-63 (տպարան)